

ԳՆԻՋԵՑՈՒՄ

«ՄԵՏԱ-ԻՔՍ ՄԱՐԿԵՏՍ» փակ բաժնետիրական ընկերությունը 09/11/23 թվականից մինչև 31/12/23 թվականը ընկած ժամանակահատվածի համար հայտարարում է գնիջեցում և/կամ նոր պայմաններ (այսուհետ նաև՝ Գնիջեցում) իր կողմից մատուցվող հետևյալ ծառայությունների համար ներքոնշյալ պայմաններով՝

Ծառայության տեսակը	Գործող սակագինը	Նոր սակագինը
Արտարժույթի փոխանակման ծառայություններ	0,1-1,5%	0,1%

09/11/23 թվականից մինչև 31/12/23 թվականը ընկած ժամանակահատվածի համար 425 000 000 (չորս հարյուր քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ* բրոքերային հաշվին ապահովելու դեպքում չաճախորդի համար վեց ամիս ժամկետով գործում են հետևյալ գնիջեցումները՝

Ծառայության տեսակը	Գործող սակագինը	Նոր սակագինը
Արտարժույթի փոխանակման ծառայություններ	0,1-1,5%	0,1%
ՌԴ ռուբլով դրամական միջոցների դուրսբերում	Գումարը կամ դրանով ձեռքբերված արժեթղթերը «ՄԵՏԱ-ԻՔՍ ՄԱՐԿԵՏՍ» ՓԲԸ-ի կողմից վարվող հաշիվների վրա մինչև վեց ամիս պահպանելու դեպքում՝ 2-4%	Անվճար
	Գումարը կամ դրանով ձեռքբերված արժեթղթերը «ՄԵՏԱ-ԻՔՍ ՄԱՐԿԵՏՍ» ՓԲԸ-ի կողմից վարվող հաշիվների վրա վեցից տասներկու ամիս պահպանելու դեպքում՝ 0.5-2%	
	Գումարը կամ դրանով ձեռքբերված արժեթղթերը «ՄԵՏԱ-ԻՔՍ ՄԱՐԿԵՏՍ» ՓԲԸ-ի կողմից վարվող հաշիվների վրա տասներկու ամսից ավել պահպանելու դեպքում՝ Անվճար	
Օտարերկրյա արժեթղթերով բրոքերային գործառնությունների իրականացում	Բաժնային արժեթղթերով (բաժնետոմսեր, ֆոնդի փայեր, բաժնետոմսերի դեպոզիտար ստացականներ, ETNs) գործարքներ, որոնք շրջանառվում են կազմակերպված շուկաներում Գործարքի ծավալի 0.1-1%-ը, մին. 50.000 դր	Բաժնային արժեթղթերով (բաժնետոմսեր, ֆոնդի փայեր, բաժնետոմսերի դեպոզիտար ստացականներ, ETNs) գործարքներ, որոնք շրջանառվում են կազմակերպված շուկաներում ա) Ռուսաստանի թողարկողների արժեթղթեր՝ գործարքի գումարի 0,5%-ը բ) ԱՄՆ բորսաներում շրջանառվող՝ < 1 ԱՄՆ դոլար բաժնետոմսերի համար՝ 50

		<p>ԱՄՆ դոլար յուրաքանչյուր պատվերի համար - բաժնետոմսերի համար ≥ 1 ԱՄՆ դոլար - 1,75 ցենտ յուրաքանչյուր բաժնետոմսի համար գ) Այլ արժեթղթեր՝ գործարքի գումարի 0.25%-ը, նվազագույն. 100.000 դր</p>
	<p>Բաժնային արժեթղթերով (բաժնետոմսեր, ֆոնդի փայեր, բաժնետոմսերի դեպոզիտար ստացականներ) գործարքներ, որոնք չեն շրջանառվում կազմակերպված շուկաներում</p> <p>Գործարքի ծավալի 0.1-1%-ը, մին. 50.000 դր</p>	<p>Բաժնային արժեթղթերով (բաժնետոմսեր, ֆոնդի փայեր, բաժնետոմսերի դեպոզիտար ստացականներ) գործարքներ, որոնք չեն շրջանառվում կազմակերպված շուկաներում ա) Ռուսաստանի թողարկողների արժեթղթեր՝ գործարքի գումարի 0,5%-ը. բ) Այլ արժեթղթեր՝ գործարքի գումարի 0.25%-ը, նվազագույն. 100.000 դր</p>
	<p>Պարտքային արժեթղթերով գործարքներ</p> <p>Անվանական արժեքի 0,1-1%, մին. 50.000 դր</p>	<p>Պարտքային արժեթղթերով գործարքներ ա) Ռուսաստանի թողարկողների պարտատոմսեր՝ անվանական արժեքի 0,5%-ը. բ) ԱՄՆ գանձապետական պարտատոմսեր - 0.1% սկզբնական, նվազագույն. 50.000 դր գ) Այլ արժեթղթեր՝ անվանականի 0.25%-ը, նվազագույն. 100.000 դր</p>

09/11/23 թվականից մինչև 31/12/23 թվականը ընկած ժամանակահատվածի համար 425 000 000 (չորս հարյուր քսանհինգ միլիոն) ՀՀ դրամին համարժեք ԱՄՆ դոլար* արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի հիման վրա Ընկերությանը հանձնելու դեպքում Հաճախորդի միջոցների եկամտաբերությունը վեց ամսվա ընթացքում կկազմի մոտարկված (indicative) տարեկան 4%:

*Արտարժույթի փոխարժեքը հաշվարկվում է 09/11/2023թ. ՀՀ ԿԲ սահմանված փոխարժեքների հիման վրա:

****Գնիջեցումը կիրառվում է նաև այն բոլոր Հաճախորդների նկատմամբ, որոնց հետ Ընկերությունը ունի հստակ սահմանված սակագներ վերոնկարագրված ծառայությունների համար՝ այնքանով, որքանով դրանք ուղղված են Հաճախորդի համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծելուն:**